Կարգապահական գործ թիվ ԿԳ-24161

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԴԱ ԳԱԳԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Գուրգեն Թորոսյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Կարեն Խալաթյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ Ժուլետա Թադևոսյանի, դիմողի ներկայացուցիչ՝ Ժենյա Թադևոսյանի և փաստաբան՝ Լիդա Գագիկի Հակոբյանի,

քննության առնելով փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանին (արտոնագիր՝ թիվ 1038), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Ջուլետա Թադևոսյանը **(այսուհետև՝ նաև Դիմող),** դիմելով Պալատ, հայտնել է, որ իր շահերի պաշտպանության նպատակով դիմել է փաստաբան Լիդա Հակոբյանին **(այսուհետև՝ նաև Փաստաբան)** և վճարել է նրան ծառայությունների մատուցման գումարը:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանն իրենից պահանջել է նաև գումար այն պատճառաբանությամբ, որ այն պահանջել է դատավորը, գործը Դիմողի օգտին լուծելու համար: Դիմողը հավելել է, որ Փաստաբանին 07.03.2018 թվականին տվել է ի պահ 480.000 ՀՀ դրամ, որը հետագայում պետք է փոխանցվեր թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով հակառակորդ կողմին, այն է՝ պատասխանողին, հաշտության համաձայնություն կնքելու դեպքում, սակայն այդ գումարը Փաստաբանը 17.06.2021 թվականին հաշվեգրել է որպես ծառայության վճար:

Դիմողի պնդմամբ, փաստաբան Լիդա Հակոբյանի կողմից ուղարկված փաստաթղթերը

թիվ ԿԳ-24161-2-Ա
20.11.2024թ.

միշտ սխալ են եղել կազմված, ինչի պատճառով վերադարձվել կամ մերժվել են:

Ի պատասխան Պալատի նախագահի 16.07.2024 թվականի թիվ 01/02.3/880 2024 գրության՝ Դիմողը 23.07.2024 թվականի բացատրությամբ հավելել է, որ Փաստաբանը ստանձնել է իր շահերի պաշտպանությունը թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով, չի մասնակցել դատական նիստերին և չի իրականացրել անհրաժեշտ գործողություններ, պահանջել է գումար նաև որոշակի նյութեր հավաքագրելու համար, այն պատճառաբանությամբ, որ դրանց կազմելու համար պետք է ներգրավի այլ անձի:

Դիմողը նաև նշել է, որ Փաստաբանը շարունակում է պաշտպանել իր շահերը, սակայն չի պատասխանում իր զանգերին:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը վերադարձվել է մի շարք թերությունների պատճառով, որը կրկին ներկայացվելուց հետո մերժվել է՝ թերությունները չվերացնելու պատճառով:

Դիմողը հայտնել է, որ ի սկզբանե վճարել է ամբողջ գումարը ծառայության մատուցման համար, սակայն Փաստաբանը յուրաքանչյուր անգամ պահանջել է հավելյալ գումարներ՝ պետական տուրք վճարելու, այլ կողմին փոխանցելու և այլնի համար, սակայն այդ գումարները պահել է իրեն: Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբան Լիդա Հակոբյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Դիմողին ներկայացվել է 18.09.2024 թվականին կազմված պահանջ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նար Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը, սակայն կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցները չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Լիդա Հակոբյանին առաջարկվել է՝ Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Ջուլետա Թադևոսյանի դիմումի վերաբերյալ: Փաստաբանը միջնորդել է Պալատի նախագահին լրացուցիչ մեկ շաբաթյա ժամկետ տրամադրել բացատրություն ներկայացնելու համար, ինչը Պալատի նախագահի գրությամբ մերժվել է: Այնուհետև Փաստաբանը 2024 թվականի հուլիսի 30-ին ներկայացրել է «Իրազեկում» վերտառությամբ բացատրությունը, որով իրազեկել է Պալատին, որ դիմումի իրական հեղինակը Դիմողի քույրն է՝ Ժենյա Թադևոսյանը, որի դրդմամբ է Դիմողն իր դեմ հաղորդում ներկայացրել:

Բացատրությամբ Փաստաբանը տեղեկացրել է նաև, որ 2016 թվականից լիազորագրով ստանձնել և ներկայացրել է Ջուլետա Թադևոսյանի, Ղուկաս Ղուկասյանի, Անուշավան Ղուկասյանի օրինական շահերը, թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով դատավարությունը ընթացել է 8 տարի, բազմաթիվ դատավորների մակագրվելու հիմքով: Իր վերաքննիչ բողոքի արդյունքում վերաքննիչ բողոքը բավարարվել և վճիռը բեկանվել է: Գործն ուղարկվել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան նոր քննության:

2016 թվականից մինչև դատաքննությունը կատարվել են մի շարք աշխատանքներ, ներկայացվել են հայցադիմումներ, հայցի առարկայի լրացումներ և փոփոխություններ, ձեռք են բերվել ապացույցներ, 2024 թվականին վճիռն իր կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, այժմ ՀՀ վճռաբեկ դատարան:

2021 թվականին բեկանված գործի շրջանակներում և նոր ծավալով քննության դատական պաշտպանության համար վստահորդի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն վճարելու, կնքելու նոր պայմանագիր, որի արդյունքում կնքվել է համաձայնագիր, պայմանագիր, քանի որ բեկանված գործը վերանայման հիմքով պետք է սկսվեր սկզբից, ուստի 2016 թվականին վճարված գումարն այլևս նոր դատական պաշտպանության համար չէր կարող համարվել հիմք, պետք է կնքվեր նոր պայմանագիր, ծառայության համար նոր հոնորար որոշվեր, որի համար իր և վստահորդի միջև կնքվել է, համաձայնագիր, և ընկերությանը հանձնված գումարը վստահորդը ծառայության դիմաց թողել է ընկերությանը, քանի որ իր պահանջած 600.000 ՀՀ դրամը վստահորդը չի կարողացել վճարել, ուստի ձեռք է բերվել համաձայնություն 480.000 ՀՀ դրամը թողնել ծառայության դիմաց:

Փաստաբանը բացատրությամբ նշել է, որ հոգուտ Դիմողի գործը լուծելու համար դատավորին գումար տալու պահանջ ներկայացնելու պատմությունը հորինված է:

Եթե նման գումար Ջուլետա Թադևոսյանը կարողանար տրամադրել, ապա 4 տարի անընդմեջ հաշտության համաձայնություն կկնքվեր պատասխանողի նշված գումարի պահանջի չափով:

Փաստաբանը նշել է, որ Դիմումի մեջ խոսել է 2000 դոլարի մասին, բայց հաջորդ պարբերության մեջ խոսել է 1000 դոլարի մասին:

Զանգերին չպատասխանելու մասով Փաստաբանը հայտնել է, որ առհասարակ իր վստահորդը չի զանգահարել, նա մշտապես եկել է գրասենյակ, անկախ նրանից, թե Փաստաբանը տեղում եղել է, թե ոչ, ամիսներ շարունակ զանգահարել է իր բջջային հեռախոսահամարին, և իր անվան փոխարեն այլ անուն է տվել, քանի որ զանգահարել է հարևանուհուն, բայց իր հեռախոսահամարը գրանցված է եղել որպես հարևանուհու հեռախոսահամար և այդպես ամեն առավոտ:

Ինչ վերաբերվում է իր կողմից դատական նիստերի չներկայանալուն, ապա Փաստաբանը նշել է, որ դատական նիստերին 8 տարի շարունակ ներկայացել է: Չի ներկայացել վճռի հրապարակմանը, քանի որ այդ օրը համընկել է իր ամուսնու գործով դատական նիստի օրվա հետ, որի շրջանակներում իրականացվել է պայմանական վաղաժամկետ ազատման դիմումի քննությունը, որը տեղի է ունեցել Արթիկ քաղաքի քրեակատարողական հիմնարկում, և այդ օրը ներկայացրել է իր ամուսնու շահերը ու նախապես այդ մասին դիմումով տեղեկացրել է վճիռը հրապարակած դատավոր Ա. Չիչոյանին:

Եվս մեկ անգամ 2023 թվականին, վճռի հրապարակումից առաջ լիազորագրի ժամկետի ավարտման հիմքով քաղաքացիական գործը կրկին վերսկսելու օրը, առողջական խնդիրներով պայմանավորված եղել է տանը անկողնային վիճակում պառկած, սակայն բոլոր ջանքերը գործադրել է որպեսզի օգնականի միջոցով լիազորագիրը դատարան ներկայացվի:

Մեկ անգամ ևս հարգելի պատճառով հետաձգվել է դատական նիստը, քանի որ իր անչափահաս որդին անգինայով և ջերմությամբ հիվանդ է եղել:

Այլ հիմքերով, անհարգալից երբևէ չի բացակայել որևէ դատական նիստից, ընդհուպ ձեռքերը «բժշկական միջամտությամբ կատետրներ» դրված, անչափահաս որդու հետ միասին ներկայացել է դատական նիստին, քանի որ վերջինս տվյալ օրը խնամող չի ունեցել:

Փաստաբանը նշել է, որ Դիմումի մեջ գրված է, թե իբր Դիմողը չի հիշում, թե քանի ամիս է այդ 120.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարն իր մոտ է և չի վերադարձնում իրեն, պնդում է, որ այն հետ վերադարձնի, մինչդեռ 120.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարն վերադարձնելու պահանջ երբևէ չի եղել, իսկ այն վերադարձնելու առաջարկը եղել է Փաստաբանինը, քանի որ փաստաբան Սրբուհի Հովհաննիսյանի հետ խոսելուց հետո և լսելով ձայնագրությունը, որից լսվում է, որ Ժենյա Թադևոսյանը հայհոյել է իրեն և հորդորել Դիմողին պահանջել Փաստաբանից 480.000 ՀՀ դրամ գումարը, Փաստաբանն այլևս չի ցանկացել մեկ այլ պահանջով Դիմողի շահերը ներկայացնել դատարանում:

26.06.2024 թվականին զանգահարել է Ջուլետա Թադևոսյանին, հայտնել, որ հիվանդանոցում է, խնդրել է հաջորդ օրը գալ 120.000 ՀՀ դրամ պետական տուրքը հետ ստանալու համար, հայտնել է, որ իր առողջությունը կտրուկ վատթարացել է, սակայն Ժենյա Թադևոսյանը Դիմողի հետ 26.06.2024 թվականին հետ եկել են իր գրասենյակ և, անհարգալից վարքագիծ դրսևորել գրասենյակի աշխատակցի նկատմամբ, տեսել և համոզվել են, որ Փաստաբանը տեղում չէ, հեռացել են:

26.06.2024թ., երեկոյան, տեղեկանալով միջադեպի մասին, Փաստաբանը զանգահարել է Դիմողին, հասկանալու նման արարքի դրդապատճառը:

Նույն օրը, երեկոյան, զանգահարել է, իր վստահորդ Ղուկաս Ղուկասյանին, Դիմողի որդուն, հայտնել մորաքրոջ արկածախնդրության մասին և առաջարկել է ներկայանալ անձամբ գրասենյակ և ստանալ 120.000 ՀՀ դրամը: Փաստաբանը նշել է, որ 480.000 ՀՀ դրամը չի կարող վերադարձվել, քանի իր աշխատանքի դիմաց կատարված վճարումն է, որի մասին խոսվել է տեղեկացվել է, անգամ Դիմողն այդ մասին, դեռևս 3 տարի առաջ, կնքել է իրավական փաստաթուղթ, որին ծանոթ է: Այդ գումարի դիմաց ևս 4 տարի իրականացվել է դատական պաշտպանություն: Ղուկաս Ղուկասյանը ներկայացել է գրասենյակ ստացել է 120.000 ՀՀ դրամը և հեռացել:

Նշել է, որ Փաստաբանը չէր կարող իր ծառայություններն անհատույց մատուցել: Փաստաբանը հայտնել է, որ Դիմողն իր դիմումում անընդհատ նշում է, որ Փաստաբանը Դիմողից անընդհատ գումար է պահանջել: Մինչդեռ Դիմողը Փաստաբանի պահանջով վճարել է միայն պետական տուրքեր, փորձագետի եզրակացության արժեքը:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին ներկայացվել է 18.09.2024 թվականին կազմված պահանջ (այսուհետ՝ Պահանջ) Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը, սակայն կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցները ներկայացրել է բացատրություն, որով ըստ էության պնդել է իր կողմից «Իրազեկում» վերտառությամբ նշված փաստաթղթում հայտնած դիրքորոշումը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>

Պալատի նախագահի 25.07.2024թ. թիվ 312-Ա/ԿԳ-24161 որոշմամբ փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.2.2-րդ, 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.6.1-ին ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

01.08.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Սույն կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 30.09.2024թ. կազմել է եզրակացություն:

30.09.2024թ. սույն կարգապահական գործը հանձնվել է Հանձնաժողովին:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6-րդ կետերում շարադրված փաստերը, իսկ նույն գլխի 7-10-րդ կետերում շարադրված փաստերը հաստատված չեն համարվել:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ և Պալատում 30.07.2024թ. մուտքագրված Փաստաբանի բացատրությամբ:*

2. Փաստաբանը, թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով կայացված 26.01.2024 թ. վճռի դեմ, ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.03.2024 թ. որոշմամբ վերադարձվել է, մի շարք թերությունների պատճառով: Այնուհետև Փաստաբանի կողմից կրկին վերաքննիչ բողոք է ներկայացվել և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.05.2024թ. որոշմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է՝ առկա թերությունները չվերացնելու հիմքով: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

3. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.05.2024թ. որոշման դեմ Փաստաբանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, ինչի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ, որոշել է վերադարձնել թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի

15.05.2024 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ժուլետա Թադևոսյանի բերած և Ղուկաս Ղուկասյանի անունից բերված վճռաբեկ բողոքը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

4. Փաստաբանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ որոշել է թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.05.2024 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ժուլետա Թադևոսյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել: Իր որոշման պատճառաբանական մասում ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտման մասին **բողոք բերած անձի փաստարկները հերքվում են Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով,** ուստի սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած հիմնավորումները բավարար չեն բողոքարկվող դատական ակտում դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայությունն ու այդ խախտմամբ արդարադատության բուն էության խաթարումը հիմնավորված համարելու համար: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

5. Փաստաբան Լիդա Հակոբյանին 07.03.2018 թվականին տվել է ի պահ 480.000 ՀՀ դրամ, որը հետագայում պետք է փոխանցվեր թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով պատասխանողին՝ հաշտության համաձայնություն կնքելու դեպքում, սակայն այդ գումարը Փաստաբանը 17.06.2021 թվականին հաշվեգրել է որպես ծառայության վճար: *Սույն փաստը հաստատվում է գործում առկա 07.03.2018թ. և 17.06.2021թ. համաձայնագրերի պատճեններով:*

6. Փաստաբանը Դիմողից պահանջել է գումար թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով մասնակից չդարձած երրորդ անձ Ղուկաս Ղուկասյանի անունից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար: Դատարանի 18.10.2016թ. որոշմամբ Ղուկաս Ղուկասյանը ներգրավվել է որպես երրորդ անձ: *Սույն փաստը հաստատվում է Հանձնաժողովի նիստի ժամանակ հայտնած Փաստաբանի դիրքորոշումներով, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաստատված չի համարում հետևյալ փաստերը.

7. Դիմողի փաստաբան Լիդա Հակոբյանը Դիմողից պահանջել է նաև գումար այն պատճառաբանությամբ, որ այն պահանջել է դատավորը գործը լուծելու համար հօգուտ Դիմողի լուծելու համար:

8. Թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով Փաստաբանն անհարգելի պատճառով չի մասնակցել դատական նիստերին:

9. Փաստաբանը շարունակում է պաշտպանել իր շահերը, սակայն չի պատասխանել իր

զանգերին:

10. Փաստաբանը յուրաքանչյուր անգամ պահանջել է հավելյալ գումարներ՝ պետական տուրք վճարելու, այլ կողմին փոխանցելու և այլնի համար, սակայն այդ գումարները պահել է իրեն:

Սույն կարգապահական գործի շրջանակներում ոչ վերաբերելի կամ անթույլատրելի ապացույցներ առկա չեն:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի և տեղեկանքի հավելվածի համաձայն՝ Լիդա Հակոբյանը փաստաբան է հանդիսանում 16.10.2010թ. թվականից, և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում ունի 1 /մեկ/ կարգապահական տույժ՝ տուգանք և 8 ակադեմիական ժամ վերապատրաստման դասընթաց «Դեոնթոլոգիա» թեմայով, որն ուժի մեջ մտած չէ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

7.1 Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Լիդա Հակոբյանը Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման մասով ենթակա է պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ..

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար (...):*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս* ***իր մասնագիտական***

պարտականությունները *կատարել ողջամտորեն,* ***բարեխղճորեն****, որակավորված, սկզբունքայնորեն և* ***ժամանակին****, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *վերաքննիչ բողոքի* ***ընդունումը մերժվում է****, եթե՝ սույն օրենսգրքի* ***371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում*** *բողոք ներկայացրած անձը ներկայացրել է* ***նոր վերաքննիչ բողոք, որում չի վերացրել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված բոլոր խախտումները****, կամ բողոքը ներկայացրել է սույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ, կամ սույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացրել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդություն, որը մերժվել է:*

Օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ* ***բողոքը վերադարձնելուց հետո*** *բողոքում թույլ տրված* ***խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում****, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով եռօրյա ժամկետում* ***սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը****: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար* ***նոր ժամկետ չի տրվում:***

Նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում* ***վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝ չեն պահպանվել սույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները.***

Օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին նախադասության համաձայն՝ *բողոքին կցվում են օրենքով սահմանված կարգով և չափով* ***պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը*** *կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, բողոքը գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները, բացառությամբ հայցադիմումը վերադարձնելու և ընդունումը մերժելու դեպքերի, ինչպես նաև բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցը և* ***վերաքննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը:***

Օրենսգրքի 198-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***վճիռը բողոքարկվելու և*** *վերաքննիչ դատարանի կողմից* ***վերաքննիչ բողոքը*** *վերադարձնելու կամ* ***դրա ընդունումը մերժելու դեպքում*** *դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու պահից, իսկ* ***եթե վերաքննիչ դատարանի համապատասխան որոշումը բողոքարկվում է Վճռաբեկ դատարան, ապա՝ Վճռաբեկ***

դատարանի կողմից վճռաբեկ բողոքը *վերադարձվելու, առանց քննության թողնվելու,* ***վարույթ ընդունելը մերժվելու*** *կամ վճռաբեկ բողոքը մերժվելու* ***պահից***:

Վերը նշված նորմատիվ իրավական ակտերի իրավական նորմերի, ինչպես նաև Կանոնագրքի կանոնների համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ փաստաբանը պարտավոր է իր վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ իր մասնագիտական պարտականությունները կատարել բարեխղճորեն և ժամանակին, մասնավորապես՝ ժամանակին իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողություններն իր վստահորդի հանձնարարությունը պատշաճ կատարելու համար: Քաղաքացիական գործով վերաքննության կարգով վճիռը բողոքարկելիս փաստաբանը պարտավոր է վերաքննիչ բողոքին կցել պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակը, ինչպես նաև վերաքննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը: Նշված պարտականությունը չկատարելու դեպքում վերաքննիչ բողոքը կարող է վերադարձվել, ինչով պայմանավորված փաստաբանի մոտ ծագում է նոր պարտականություն կամ 15 օրյա ժամկետում շտկել «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրված թերությունները և նույն ժամկետում այն կրկին ներկայացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան **(այսուհետև՝ Վերաքննիչ դատարան)** կա՛մ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ ներկայացնել վճռաբեկ բողոք:

Եթե փաստաբանը, կատարելով վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու իր պարտականությունը, կրկին ներկայացվող վերաքննիչ բողոքում ընդհանրապես չի շտկում մատնանշված թերությունները կամ դրանք շտկում է օրենքով սահմանված 15-օրյա ժամկետի խախտմամբ, ապա Վերաքննիչ դատարանը կարող է նման վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել: Ընդ որում Օրենսգրքի 198-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով ի վնաս վստահորդի կայացված վճիռը, որի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել փաստաբանը, օրինական ուժի մեջ է մտնում դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի վարույթ ընդունելը մերժելու որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքի ընդունումը մերժելու ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը կայացնելու պահից:

Տվյալ դեպքում «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում տեղադրված տեղեկատվությունից պարզ է դառնում, որ Փաստաբանը թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով ստանձնել է Դիմողի և Ղուկաս Ղուկասյանի շահերը: Նշված քաղաքացիական գործով Դիմողը հանդես է եկել որպես հայցվոր և Դատարանը 26.01.2024թ. վճռով մերժել է Դիմողի հայցը: Վճռի դեմ փաստաբանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 18.03.2024թ. որոշմամբ վերադարձրել է վերաքննիչ բողոքը երեք հիմքով:

Առաջին հիմքով Վերաքննիչ դատարանը փաստել է, որ վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է մուտքի թիվ 86423523 օրդերը, որում բացակայում է վճարողի ստորագրությունը (ստորագրություն առկա է միայն կատարողի անվան դիմաց):

Երկրորդ հիմքով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ բողոքին չի կցվել բողոքի էլեկտրոնային կրիչը:

«Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետում Վերաքննիչ դատարանը նշել է, որ բողոքում թույլ տրված խախտումը վերացնելու և այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում Վերաքննիչ դատարան կրկին ներկայացնելու

դեպքում վերաքննիչ բողոքը ներկայացված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը:

Փաստաբանը 25.04.2024 թվականին վերաքննիչ բողոքը ներկայացրել է կրկին: Վերաքննիչ դատարանը 15.05.2024թ. որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքի ընդունումը: Անդրադառնալով վերաքննիչ բողոքի վերադարձման 1-ին հիմքին՝ Վերաքննիչ դատարանը արձանագրել է, որ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 18.03.2024 թվականի որոշումը Փաստաբանը ստացել է 04.04.2024 թվականին, իսկ վերաքննիչ բողոքը կրկին ներկայացրել է 25.04.2024 թվականին, այսինքն՝ կրկին վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի վերջին օրը: 26.04.2024 թվականին ներկայացված պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացվել է Վերաքննիչ դատարանի կողմից թերությունները շտկելու համար տրամադրված 15-օրյա ժամկետի ավարտից հետո: Անդրադառնալով վերաքննիչ բողոքի վերադարձման 2-րդ հիմքին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ բողոք բերող անձի ներկայացուցչի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին կից ներկայացված էլեկտրոնային կրիչը դատարկ է:

Այսինքն ստացվում է, որ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու պատճառ է հանդիսացել Փաստաբանի կողմից «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ մատնանշված թերությունները չվերացնելը:

Վերաքննիչ դատարանի 15.05.2024թ. որոշման դեմ Փաստաբանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը վերադարձվել է Վճռաբեկ դատարանի կողմից, այնուհետև Փաստաբանի կողմից վճռաբեկ բողոքը ներկայացվել է կրկին, որի արդյունքում Վճռաբեկ դատարանը 23.10.2024թ. որոշմամբ վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը մերժվել է: Վճռաբեկ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում նշել է, որ վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտման մասին բողոք բերած անձի փաստարկները հերքվում են Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով, ուստի սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած հիմնավորումները բավարար չեն բողոքարկվող դատական ակտում դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայությունն ու այդ խախտմամբ արդարադատության բուն էության խաթարումը հիմնավորված համարելու համար:

Ստացվում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը ևս գտել է, որ Փաստաբանը վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու պատճառ է հանդիսացել Փաստաբանի կողմից «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ մատնանշված թերությունները սահմանված ժամկետում չվերացնելը:

Հաշվի առնելով վերը նշված փաստերը՝ Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 23.10.2024թ. անհերքելի փաստ է դարձել Փաստաբանի կողմից «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 18.03.2024թ. որոշմամբ մատնանշված թերությունները սահմանված ժամկետում վերացված չլինելը, ինչի հետևանքով վերաքննիչ բողոքի վարույթ ընդունվելը մերժվել է:

Այսինքն Փաստաբանը բարեխղճորեն և ժամանակին չի կատարել բոլոր անհրաժեշտ գործողություններն իր վստահորդին պատշաճ իրավական օգնություն ցույց տալու համար, ինչի հետևանքով Դիմողը կորցրել է ի վնաս իրեն կայացված դատական ակտը վիճարկելու հնարավորությունից:

Բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու վարքագծի տեսանկյունից

Հանձնաժողովն անդրադառնալով նաև Փաստաբանի կողմից դատական նիստերին անհարգելի պատճառով չմասնակցելու հարցին՝ արձանագրում է, որ սույն կարգապահական գործով Դիմողի կողմից այդպես էլ չի ներկայացվել որևէ ապացույց Փաստաբանի կողմից դատական նիստերին անհարգելի պատճառով չմասնակցելու վերաբերյալ: Հետևաբար նշված հանգամանքը Հանձնաժողովը հաստատված համարել չի կարող:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձանժողովը գտնում է, որ Փաստաբանը ենթակա է պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման համար:

7.2. Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Լիդա Հակոբյանի նկատմամբ Կանոնագրքի 2.2.2-րդ և 3.6.1-ին ենթակետերի պահանջների ենթադրյալ խախտման համար հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հանձնաժողովը Փաստաբանին կարգապահական պատասխանատվության հարցը որոշելու համար անհրաժեշտ է համարում Փաստաբանին վերագրվող վերը նշված Կանոնագրքի առերևույթ խախտումներին անդրադառնալ առանձին-առանձին.

«Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի ենթադրյալ խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

«Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մասի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը գործող հարաբերությունների վրա, եթե օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:*

Այս համատեքստում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ 11.07.2024թ. դիմումին կից ներկայացված համաձայնագրերի բովանդակությունից հաստատվում է, որ Դիմողի կողմից ***բարձրացված հարցերը փաստացի վերաբերում են 2018 և 2021 թվականների ընթացքում Փաստաբանի կատարված գործողություններին՝*** այսինքն համապատասխան իրավահարաբերությունների ծագման պահին փաստացի գործում էր՝ մինչև ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-366-Ն օրենքի ընդունումը, հին խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենքը **(Սույն որոշման 7.2-րդ բաժնում այսուհետև՝ Օրենք)**, որով ևս կարգավորված են եղել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների հետ կապված հարցերը: Մասնավորապես.

Օրենքի 39.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության* ***հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո****: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ* ***հարուցելու հիմքն է*** *փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով* ***նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:***

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ ***Օրենքով սահմանված հիմքերի առերևույթ առկայության դեպքում***: Ընդ որում փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանում նաև փաստաբանի արարքի մեջ Օրենքի կամ փաստաբանների վարքագծի կանոնագրքով **(այսուհետ՝ Կանոնագիրք)** նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:

Հարկ է նշել, Դիմողն ըստ էության Փաստաբանին վերագրում է նաև այնպիսի վարքագծի (գործողության կամ անգործության) դրսևորում, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը: Կանոնագրքի իմաստով նշված արարքը Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանում:

Միևնույն ժամանակ Փաստաբանի նկատմամբ չի կարող հարուցվել կարգապահական վարույթ, իսկ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, եթե վարույթի հարուցման հիմքը ծագելուց հետո 1 տարվա ընթացքում և հայտնաբերելուց հետո 6 ամսվա ընթացքում Դիմողը չի դիմել Պալատի նախագահին փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին դիմումով:

Փաստաբանին կարգապահական պատասխանատվության հիմքի ծագում է համարվում այն պահը, երբ Փաստաբանը կատարում է Օրենքով կամ Կանոնագրքով արգելված արարքը:

Փաստաբանին կարգապահական պատասխանատվության հիմքի հայտնաբերում է համարվում այն պահը, երբ տուժողը (ով հետագայում Պալատ դիմելու դեպքում ձեռք է բերում Դիմողի կարգավիճակ) իմանում է փաստաբանի կողմից առերևույթ կարգապահական խախտում կատարելու կամ կատարած լինելու մասին:

Օրենքը, փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցում էական նշանակություն է տալիս կարգապահական վարույթ հարուցելու հիմքի ծագման կամ հայտնաբերման փաստին:

Տվյալ դեպքում Դիմողը նշել է, որ Փաստաբանն իրենից 480.000 ՀՀ դրամ գումար է պահանջել հաշտության համաձայնություն կնքելու վերաբերյալ, սակայն հաշտության

համաձայնությունը չի կնքվել և այդ գումարը Փաստաբանն իրեն չի վերադարձրել: Սույն կարգապահական գործում առկա է 07.03.2018 թվականին Դիմողի և Փաստաբանի միջև կնքված 480.000 ՀՀ դրամ գումարը փաստաբանական գրասենյակին ի պահ հանձնելու վերաբերյալ համաձայնագիր, ինչպես նաև 17.06.2021թ. միայն Դիմողի կողմից համաձայնագիր 480.000 ՀՀ դրամ գումարը փաստաբանական գրասենյակին փաստաբանական ծառայության դիմաց թողնելու վերաբերյալ:

Ստացվում է, որ կարգապահական վարույթը հարուցելու հիմքը՝ Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի առերևույթ խախտումը, ծագել է 17.06.2021թ., իսկ այդ հիմքը Դիմողի կողմից հայտնաբերվել է հենց նույն օրը, քանի որ վերջինս 17.06.2021թ. ստորագրել է համաձայնագիրը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Հանձնաժողովի նիտի ժամանակ Փաստաբանը հայտնել է, որ ստացել է 350.000 ՀՀ դրամ գումար, որպեսզի այն փոխանցի իր գրասենյակի հետ համագործակցող փաստաբանին, գործին մասնակից չդարձած երրորդ անձ Ղուկաս Ղուկասյանի անունից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար, սակայն փաստաբանը չի համաձայնվել և վերաքննիչ բողոքը ներկայացրել է փաստաբան Լիդա Հակոբյանը, իսկ նշված գումարը Ղուկաս Ղուկասյանի հետ ձեռք բերված բանավոր պայմանավորվածության համաձայն պահել է իրեն որպես հոնորար: «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործի վերաբերյալ առկա տեղեկատվության համաձայն՝ Ղուկաս Ղուկասյանը որպես երրորդ անձ է ներգրավվել 2016 թվականին: Հետևաբար Փաստաբանի կողմից այլ փաստաբան ներգրավելու համար Դիմողից գումարը պահանջելու վարքագծի մասով հարուցված կարգապահական վարույթը ևս ենթակա է կարճման վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Փաստաբանը Դիմողից պահանջել է գումար այն պատճառաբանությամբ, որ այն պահանջել է դատավորը գործը հօգուտ Դիմողի լուծելու համար, ապա նշվածի կապակցությամբ որևէ ապացույց չի ներկայացվել, ուստի այդ մասով Փաստաբանի մասով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի ենթադրյալ խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս* ***փաստաբանը պարտավոր է***՝

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել ***պայմանագրով ստացած հոնորարի այն մասը****, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ.*

2) վերադարձնել հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի հատուցման համար նախատեսված և ***չծախսված միջոցները****.*

3) վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում ***իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը*** *(փաստաբանը կարող է այդ*

փաստաթղթերի պատճենները պահպանել):

Վերը նշված իրավական նորմի և Կանոնագրքի կանոնի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ փաստաբանը պարտավոր է հանձնարարության կատարման ընթացքի մասին պատշաճ տեղեկացնել իր վստահորդին և պատասխանել վստահորդի հարցերին:

Փաստաբանի կողմից վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես չտեղեկացնելու փաստը հաստատող ապացույց կարող են համարվել փաստաբանի և նրա հեռախոսային զանգերի քաղվածքը, փաստաբանի և նրա վստահորդի միջև տեղի ունեցած հաղորդագրությունների քաղվածքը, ինչպես նաև այլ ապացույցներ, որոնք առավել հավանական են դարձնում Փաստաբանի կողմից իր վստահորդին կանոնավորապես չտեղեկացնելու փաստը:

Տվյալ դեպքում Դիմողի կողմից Օրենքով սահմանված ժամկետում որևէ ապացույց չի ներկայացվել Փաստաբանի կողմից Դիմողի զանգերին չպատասխանելու, հանձնարարության կատարման ընթացքի մասին վերջինիս չտեղեկացնելու և հարցերին չպատասխանելու մասին: Հանձնաժողովի նիստի ժամանակ ևս Դիմողը պնդել է, որ Փաստաբանը չի զանգահարել իրեն, սակայն նաև նշել է, որ երբ Փաստաբանին պետք է եղել այդ ժամանակ էլ զանգահարում է իրեն:

Միևնույն ժամանակ Փաստաբանը, թե՛ իր բացատրություններով և թե՛ Հանձնաժողովի նիստի ժամանակ ներկայացրած դիրքորոշմամբ նշել է, որ Դիմողը չի իմացել Փաստաբանի հեռախոսահամարը, Դիմողն անընդհատ զանգահարել է Փաստաբանին, սակայն կարծել է, թե զանգահարել է իր հարևանուհուն: Փաստաբանը նաև հավելել է, որ Դիմողի հետ կապն իրականացվել է հանդիպումների միջոցով, քանի որ Դիմողն իր քրոջ հետ կամ իր որդու Ղուկաս Ղուկասյանի, ով նույնպես հանդիսացել է թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով Փաստաբանի վստահորդը, այցելել են գրասենյակ և Փաստաբանը պատասխանել է Դիմողի հարցերին և իրազեկել գործի ընթացքի մասին:

Ուստի, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից հանձնարարության ընթացքի մասին Դիմողին կանոնավորապես չտեղեկացնելու փաստը գործում առկա ապացույցներով չի հաստատվում: Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետերի խախտման մասով կարգապահական վարույթը ևս ենթակա է կարճման:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>.

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել «խիստ նկատողություն» և «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» կարգապահական տույժերը՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Հանձնաժողովի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելով:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Փաստաբանին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում այն, որ Փաստաբանը չի շտկել «Վերաքննիչ. բողոքը վերադարձնելու մասին» 18.03.2024թ. որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից մատնանշված թերությունները և կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոքը թերություններով, այդպիսով էլ ավելի է խորացրել առանց այդ էլ ոչ իրավաչափ և Կանոնագրքի պահանջները խախտող արարքում իր մեղքը:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը հաստատված է համարում այն փաստը, որ Փաստաբանն իրեն մեղսագրվող արարքը կատարելով վնասել է իր վստահորդի շահերը, քանի որ թիվ ԵՇԴ/2615/02/16 քաղաքացիական գործով ի վնաս հայցվորի, տվյալ դեպքում՝ Դիմողի «Հայցը մերժելու մասին» 26.01.2024թ. վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալի համատեքստում Փաստաբանի վարքագծի հետևանքով խախտվել են Փաստաբանի հակառակորդ կողմի և Դիմողի իրավունքները, և դրանց պաշտպանությունը ապահովելու նպատակով Դիմողը Փաստաբանի դեմ հաղորդում է ներկայացրել Պալատի նախագահին:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում՝ Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև օրինական ուժի մեջ մտած կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով նրա նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «խիստ նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 7-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 1038) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ քաղաքացիական դատավարությանը առնչվող թեմաներից մեկով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 1038) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 2.2.2-րդ և 3.6.1-ին ենթակետերի խախտման մասով կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-24161-2-Ա
20 նոյեմբերի 2024թ.
ք. Երևան